

ՀԱՆԴԻՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ի

Հ Ի Ն Պ Ն Մ Ա Յ Ի Ս Ի

Ոչ ևս է նա . որպէս անշարժ
 Ի մահագոյժն հեծուժիւն,
 Եկաց դիակն անյիշատակ,
 Յայնքանի զիրկ 'ի շքնշնյն,
 Այսպէս 'ի թունդ, յապուշ թըմբիր
 Համբան ընդ այն՝ կայ երկիր:

Լուռ ըզվերջին առեալ խորհել
 Բաշխապարզն առնն ըզժամ,
 Եւ վարանի՝ արգեօք գայցեն
 Մահկանացուի հետք նըման,
 Զարինըռուշտ փոշի նորին
 Դընել կոխան ընդ ոտին:

Ըզնա 'ի դահ փայլակնացայտ
 Ետն ոգիս, լուռ եկաց .
 Եւ հետ ընդ հետ մինչ անդադար
 Գլեցաւ, յարեաւ և գըթեաց,
 Ի բիւրատր ձայնից զըրուագ՝
 Ոչ խառնեցաւ իւր նըւագ:

Կոյս 'ի շքնթող զըրուատանաց
 Եւ վատշուէր յեպերից,
 Յուզեալ յառնէ արդ ընդ յանկարծ
 Սուզիլ այնքան ճաճանչից .
 Եւ յարմարէ առ սնար շիրմի
 Տաղ՝ զի արգեօք մի մեռցի:

ՅԱլպան բարձանց մինչ 'ի Յուրանս,
 Մանանարայ 'ի Հոնոս
 Անվանելոյն շանթք հետամուտ
 Ընդ փայլականց թըռեան ցոլս .
 Հար 'ի Սկիլոյ ցըճանայիւս,
 Ի մի ծովէ անդր 'ի միւս:

Եղէն ըստոյգ արգեօք այն փառք .
 Յետնոց վըճիւս այս զըժնեայ .
 Զակասք յերկիր խոնարհացոյք
 Վեհին Անմահ՝ որ 'ի նմո
 Դրոշմել հաստիչ զիւրոյ ոզոյն
 Ընտրեաց ըզտիպ լայնագոյն:

Ընդ մըրրկայոյզ և սըրտաթունդ
 Հըրճուանս մեծի խորհրդոյ,

'Դ անժոյժ սըրտի ծուփս եռանդուն՝
 Վառեալ թագին 'ի սիրոյ,
 Զոր և առեալ տան՝ 'ի մըրցանս,
 Ըզխոլ մըրտաց լոկ տենչանս,

Ընդ այս համայն անց 'ի հանդէս .
 Փառք մեծ ըզհետ վըսանդին,
 Ընդ փայլըստեանն և յաղթանակք,
 Պաշատն, աքսոր ցաւագին .
 Երկիցս հարեալ նա 'ի գետին,
 Երկիցս յարեալ 'ի բազին:

Ետ զիւրն անուն . դարք կըրկնաթիւ
 Վառեալ միմեանց զխմամարտ,
 Առ նա 'ի սպաս դարձան հարկի,
 Զանձնիւր բաշխից լըսել պարտ .
 Նա զըրուժիւն սաստեալ նոցուն,
 Դատող նըստաւ զերագոյն:

Ել նա 'ի բաց . յանձուկ ափունս
 Կըրքեաց զաւուրց կեանս ունայն .
 Առիթ ամբաւ նախանձանաց,
 Եւ խորագղած գըթուժեան,
 Մըշտաբորբոք ոզուոց 'ի հեռ,
 Անսանձելեաց և 'ի սէր:

Զերգ ըզզըլխով նաւաբեկին
 Զեղուն 'ի պտոյտըս ալիք,
 Ալիք՝ զորովք թըշուառն այն հէգ,
 Խոր գառնալինն անդ և ձիւր,
 Տարածանէր զաչս ընդունայն
 Դիտել ափունս բացական:

Այսպէս զոգուով նորին զիզաւ
 Յիշատակացլն կարկաւ .
 Քանինն, ո՛հ, յետնոյ՝ զանձնէն
 Պատմել անձկաւ բուռն եհար,
 Եւ գյաւիտեանց թերթիւքն ամբաւ
 Վաստակարեկ ձեռքն անկաւ:

Քանիցս աւուրն 'ի մահ լըսիկ
 Եւ ձեռնունայն չիջուցեալ,
 Խոնարհեալ զբիրարն շանթընկէց,
 Բազուկքն 'ի լանջս իւր 'ի ծալ:

կառեաւ եկաց , և անդ 'ի նոյն'
Անցելոյն յուշ ընդհարաւ :

Աժ ըզմբտաւ զզրանսն անկայուն ,
Եւ զձորսն անցեալ գիմազբաւ ,
Ըզզարդ զինուց փայլահնացայտ ,
Զձիոց ծրփանս քաշարչաւ ,
Ըզպետութեան յուզմանցն աղէտ ,
Զհլուծիւն անդէն հետ ընդ հետ :

Ո՛հ , յայտրանի կեղեքանաց
Նուադեալ արդեօք որեւպառ
Եւ անձկաբեկ լըբաւ անյոյս .
Այլ ձեռն յերկնից մեհափոռ
Էջ և զըթովք ըզնա էած
Ի քաղցրասիւք շունչ կենաց :
Եւ խաղացոյց ընդ ծաղկաւէտ
Ակընկալեաց պաղտոյն ,

Թարգմ. Հ. Ա. Թ.

Յաւիտեանց դաշտս , 'ի մըրցանակ
Յաղթող բաղձից ամենայն .
Ուր հին պերճանք շխջելափառ'
Են լըուծիւն և խաւար :

Հաւանաք , անմահդ և բարերար ,
Ո՛վ յաղթութեանց դու սովոր ,
Գրբիս և պայս , և ուրախ լեր ,
Զի ոչ երբեք գըլխակոր
Ի Գողգոթոյ խոնարհութիւն
Էջ բարձրութիւն պանծագոյն :

Դու պարտասեան 'ի յաճինէ
Ցըրուեալ ըզխօսս համայն թիւր .
Որ հարկանէ Տէր և կանգնէն ,
Հեղու ըզվիշտ և ըզգիւր ,
Զամայացեալ մահճին սնարաւ
Էջ առ նըմին բազմեցաւ :

Ա. ՄԱՆԾՈՆԻ

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՐ ՄԵՐ

Լըւայ երբեմն - յաղբատ խըղի -
Իբեր ոմն զաղօթս հըրաշալի
Ողէր , յայս ձև , իմ առաջի .
« Հայր մարդկութեան , Հայր երկնաւոր ,
« Քոյին անունդ անժամանակ
« Սուրբ եղիցի առհասարակ .
« Դու մեզ կացցես միշտ թագաւոր ,
« Կամք քոյ 'ի մեզ յար եղիցի ,
« Որպէս , յերկինս նոյն և յերկրի .
« Զօրըստօրէն ըզմերըս հաց
« Տուր մեզ ձեւամբ առատ գըլթած .
« Եւ որպէս մեք պարտապանացս
« Թողումք թող մեզ պարտս եղկելեացս
« Ներեալ , ո՛վ Հայր , որդեաց քոյին ,
« Մի թողուր մեզ 'ի փորձութիւն ,
« Երբդայթից նենգաւորին
« Փըրկեալ ըզմեզ . »

Հանդէպ խաչին

Զայս աղօթէր . լոյս կանթեղին
Տակաւ աղբոս նըսեմանայր ,
Այլ սիրտ ծերոյն զըւարթանայր
Յալօթից բանս կենդանարար :

ՓՈՒՅՐՄ

ՀԱՅՐԵՆԻՔ

Զորս դիս հարաւ է պատած ,
Լոյս արևուն գեղապանծ .

Թարգմ. Հ. ԲԵՐՈՒՄ ԲՈՒՅԵՐԵՅՆ

Վերէն երկնից ջինջ կամար
Անամպ փայլի միշտ պայծառ .

Այլ ջինջ երկնիցըս ներքև ,
Սիրտըս պատեն խորհուրդք սև ,
Քանի որ իմ միտքս ընկնի
Ամպոտ երկինքն հայրենի :

Յիշեմ զերկիրն այն անուրք ,
Ուր չիք ոչ ժայռ , ոչ բարձունք ,
Ուր մայրք շիտակ ու կանգուն ,
Շուք կու սփռեն լըճերուն :

Հօն Արեգակն պայծառ չէ ,
Զուրկ է երկիրն այն վարդէ ,
Երկինք՝ արխուր ամպապատ
Զերեւի բնաւ պարզ ու զուարթ :

Բայց այդ երկնիցըս ներքև
Ոնցաւ դալար իմ արև ,
Հօն իմ յոյսեր սըբբազան
Ոսկի երազք մանկական :

Անտառք հօն տան խուլ խօշիւն ,
Լըսուի հողմոց մըռընչիւն .

Այլ քաղցր է վիշտ հայրենեաց
Քան շինութիւն օտարաց :

Հօս շինութիւն չէնք չունի .
Տըխրած է միշտ իմ հոգի .
Ինձ ի՛նչ օգուտ լոյս արև
Կապոյտ երկինք 'ի վերև :

Ս. ԱՂԱՅԻՍՏՅԱՆ